ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

ՀԱՅՀԵՂԻՆԱԿ

2022

ARMAUTHOR

CISAC

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»-ի կառուցվածքը
Structure of ARMAUTHOR



ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

COUNCIL OF AUTHORS

Հեղինակային խորհրդի նախագահ
Երվանդ Երզնկյան
Հայ կոմպոզիտոր, դիրիժոր,
պրոֆեսոր, ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ 2006թ ,
ՀՀ ժողովրդական արտիստ 2015թ ,
ՀՀ կոմպոզիտորների միության
նախագահության անդամ

President of the Author's Council
Yervand Yerznkyan
Composer, conductor, professor,
Honored Art Worker of RA in 2006
People's Artist of RA 2015,
member of the Board
of the Union of Composers of RA

Մարտին Վարդազարյան
Կոմպոզիտոր, հայ ջազային
երաժիշտ, ՀՀ ժողովրդական
արտիստ, պրոֆեսոր, ՀՀ
կոմպոզիտորների միության անդամ
Martin Vardazaryan
Composer, armenian jazz musician,
People's Artist of RA, professor, member
of the Composers' Union of RA

Ավետ Բարսեղյան
Բանաստեղծ, երգահան,
հեռուստահաղորդավար
Avet Barseghyan
Poet, songwriter, TV presenter

Արամ Սաթյան
ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր, երգահան, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ 2011թ.
Aram Satyan
Chairman of the Union of Composers RA, Honored Worker arts 2011, composer, songwriter, professor

Մարտին Ահարոնյան
Կոմպոզիտոր, նկարիչ, կիթառահար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ
Martin Aharonyan
Composer, artist, guitarist, honored figure of RA culture

Արա Գևորգյան
Հայ երաժիշտ, կոմպոզիտոր, երաժշտական պրոդյուսեր, ՀՀ վաստակավոր արտիստ 2004թ.

Ara Gevorgyan
Armenian musician, composer, music producer, Honored Artist of RA 2004



Լևոն Բլբուլյան
Բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, ՀՀ գրողների Միության անդամ
Levon Blbulyan
Poet, translator, journalist, member of the Writers' Union of RA

Ռուբեն Բաբայան
Ռեժիսոր, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ 2004թ., պրոֆեսոր Երևանի պետական տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար:
Ruben Babayan
Director, Honored Art Worker of Armenia in 2004, professor, artistic director of the Yerevan State Puppet Theater.

Էդվարդ Միլիտոնյան
Հայ բանաստեղծ, նկարիչ, Հայաստանի գրողների միության նախագահ 2013թ., ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ 2012թ.
Edvard Militonyan
Armenian poet, artist, president of the Union of Writers of Armenia in 2013, Honored Figure of RA Culture in 2012.

Էդգար Գյանջումյան
Կոմպոզիտոր, արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ կոմպոզիտորների միության անդամ
Edgar Gyanjumyan
Composer, Honored Art Worker, member of the Composers' Union of Armenia

Անուշ Ալեքսանյան
Երգահան, երաժիշտ
Anush Aleksanyan
Song writer, musician

Կարինե Խոդիկյան
Հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս
Karine Khodikyan
Armenian novelist, dramatist, public speaker

Անիտա Հախվերդյան
Երաժիշտ, բանաստեղծ, երգահան
Anita Hakhverdyan
Musician, poet, songwriter

Սուսաննա Ներսիսյան
Գլխավոր տնօրեն

Susanna Nersisyan
Director General

Հարգելի գործընկերներ, «ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»-ի անդամներ,

Հերթական անգամ սիրով Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հաշվետվություն՝ «Հայհեղինակ» կազմակերպության 2022թ. կատարած աշխատանքների վերաբերյալ:
Նախ և առաջ Հեղինակային Խորհրդի և «Հայհեղինակ»-ի ողջ անձնակազմի անունից մենք ցանկանում ենք հայտնել մեր խորին շնորհակալությունը մեր բոլոր գործընկերներին, հեղինակներին, որոնք ամբողջ 2022թ-ի ընթացքում եղել են մեզ հետ: Ամեն անգամ, երբ մենք վերլուծում ենք մեր գործունեությունը, համոզվում ենք նրանում, որ մեր կազմակերպությունը իրականացնում է շատ կարևոր գործառույթ հեղինակների և այլ իրավատերերի համար, քանի որ նրանցից շատ-շատերի համար կազմակերպության կողմից փոխանցված հե ղինակային վարձատրությունը հանդիսանում է մեծ ֆինանսական օգնություն: Քանի որ Հայաստանի Հանրապետության տարածքում մինչ այժմ «Հայհեղինակ»-ը համարվում է հեղինակային և հարակից իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող միակ կազմակերպությունը, ուստի մեր վրա է դրված չափազանց դժվարին առաքելություն, պահել և պահպանել այդ կոլեկտիվ կառավարման համակարգը, քանի որ այն միակն է և կարող է օգնել զարգանալու ինչպես արվեստն ամբողջությամբ, այնպես էլ հեղինակային և հարակից իրավունքը Հայաստանում:
Տարվա ընթացքում «Հայհեղինակ»-ը շարունակում էր հավաքագրել, բաշխել և վճարել հեղինակային հոնորարները՝ համաձայն լիցենզային պայմանագրերի կետերի, ինչպես նաև կնքել նոր լիցենզային պայմանագրեր ստեղծագործություններն օգտագործող կազմակերպությունների հետ՝ համաձայ-նեցնելով օրենքով սահմանված կարգով օգտագործման և վարձատրության վճարման պայմանների հետ: Սակայն պետք է նշել, որ էականորեն փոխվել են հեղինակների ստեղծագործությունների օգտագործման ձևերը և գույքային իրավունքների տեսակները: Նոր տեխնոլոգիաների ներդրման և մտավոր աշխատանքի օբյեկտների օգտագործման տիրույթի մեծացման հետ կապված, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում տպագիր խոսքը զիջում է նոր տեխնիկական միջոցների ստեղծած հնարավորություններին: Թվային տեխնոլոգիաների առաջընթացը հսկայական ազդեցություն է ունեցել ստեղծագործությունների ստեղծման, տարածման և օգտագործման վրա: Իհարկե, այս ամենը զգալի ազդեցություն ունեցավ նաև Հայհեղինակի գործունեության վրա: Ստեղծված իրավիճակը «Հայհեղինակ»-ին ստիպեց կենտրոնանալ հանրությանը հաղորդելու միջոցով(online) իրավունքի վրա:
Համոզվելով, որ երաժշտական կրիչների ժամանակաշրջանը նահանջում է և իր տեղն է զիջում հոսքային երաժշտությանը, որի տարածման առաջին շարքերում են Facebook, Yandex, Youtube, Spotify, Disney և մի շարք այլ հոսքային ընկերություններ, «Հայհեղինակ»-ի աշխատակիցները տարվա ընթացքում շարունակում էին համագործակցել այս ընկերությունների հետ՝ հեղինակների հոնորարները հաշվարկելու նպատակով:

Dear colleagues and members of “Armauthor

We are kindly presenting to your attention the report on works performed by Armauthor in 2022.

On behalf of Author’s board and Armauthor’s staff we would like to thank all our colleagues and authors that remained by our side in 2022 and shared with us happy and difficult moments. Every time when we analyse our activities, we ascertain that our organization plays an important role for authors and other right holder, since for many of them the royalties paid by Armauthor is the only financial income. Currently Armauthor is the only organization for the collective management of copyright and related rights and we have a difficult mission to accomplish, i.e. to protect and preserve the system of collective management. This collective management only can ensure the future of creative individuals and assist in the development of arts, as well as copyright and related rights in Armenia.
During the past year Armauthor was committed to collect, distribute and pay copyright royalties as per the license agreements and kept signing new licensing agreements with content consuming entities, according to the law for content usage and royalty payments. Its worth to mention that the works usage has changed dramatically in regards to the ways of works used and types of economic rights of authors.
Due to new technologies implementation and potentially wider usage of intellectual property, like everywhere else, in Armenia, paper press is retreating and new means of usage are evolving.
Digital technologies proliferation has a tremendous influence on works creation, distribution and usage. It has affected Armauthor’s activity as well. Considering these changes, we had to get more attention to communication to the public. Music CDs are ceasing to exist and are getting replaced by the streaming services like Facebook, Yandex, Youtube, Spotify, Disney and similar services. Considering that fact, Armauthor’s stuff has been working hard with above mentioned entities, in order to collect and distribute authors royalties.

Հեղինակային Խորհուրդ

2022թ-ի ամբողջ ընթացքում «Հայհեղինակ» կազմակերպության աշխատակիցները ինչպես միշտ սերտ կապի մեջ են եղել Հեղինակային Խորհրդի հետ: Կազմակերպության աշխատակիցների բոլոր գործողությունները, արված առաջարկություններն ու ձեռնարկված միջոցառումները եղել են Հեղինակային Խորհրդի վերահսկողության տակ: Հեղինակային Խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել են «Հայհեղինակ»-ի գործունեության հետ կապված բոլոր խնդիրները: Անհրաժեշտության դեպքում հրավիրվել են նաև արտահերթ նիստեր, որպեսզի քննարկվեն հեղինակների բողոքները և այլ բնույթի հարցեր: Շատ ժամանակ է տրամադրվել հեղինակների որոնման աշխատանքներին, ներքին կանոնների և հրահանգների փոփոխմանը, չպահանջված վարձատրությունների վերանայման գործողություններին և այլ նմանատիպ աշխատանքներին:

Authors' board

The employees of Armauthor were in close contact with the Author's board. The Author's board had the control over all the activities, measures taken and proposals of Armauthor's employees. All issues related to the activities of Armauthor were discussed at the meetings of Author's board. When necessary, additional meetings were convened to discuss the complaints and claims of right holders, as well as many other issues. Lots of time was allocated to the search of authors, amendment of internal rules and orders, actions regarding the unclaimed royalties, reinforcement of relations with artistic associations and other similar works.

«Հայհեղինակ» կազմակերպության 2022 թ. գործունեության ամփոփում:

Աշխատանք իրավատերերի հետ

«Հայհեղինակ»-ի հիմնական գործառույթներից մեկն է հեղինակների հետ ամենօրյա աշխատանքը: Այդ աշխատանքը չի սահմանափակվել միայն հեղինակային հոնորարի հավաքմամբ և բաշխմամբ: Հեղինակային բաժնի աշխատակիցները անընդմեջ կապի մեջ են եղել հեղինակների և այլ իրավատերերի հետ՝ տրամադրելով նրանց լիարժեք տեղեկատվություն կազմակերպության աշխատանքի մասին: Տարվա ընթացքում «Հայհեղինակ»-ը դրամական աջակցություն է ցուցաբերել ֆինանսապես ծանր կացության մեջ գտնվող հեղինակներին:
2022թ-ին ավելացել է հեղինակների թիվը, որոնք ցանկություն են հայտնել համագործակցել «Հայհեղինակ»-ի հետ: 2022թ-ի ընթացքում իրավատերերի հետ կնքվել են հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ 102 նոր պայմանագիր: 2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հեղինակների հետ պայմանագրերի քանակը կազմել է 1850:

On the results of Armauthor's activities in 2022

Work conducted with right holders

The daily work with authors was among Armauthor's main activities. This work was not limited to collection, distribution and payment of royalties. Armauthor's employees were in touch with authors and other right holders by providing them complete information on Armauthor's activities, as well as on the use of works by users. During the past year, Armauthor celebrated the anniversaries of its members, as well supported those members who had some financial difficulties.
During the past year Armauthor increased the number of its members that wished to cooperate with us.
In 2022 Armauthor signed new membership agreements with right holders on transfer of their rights to Armauthor. As of December 31, 2022 the number of such membership agreements on transfer of rights was1850.

Աշխատանք օգտագործող կազմակերպությունների հետ

Ամբողջ տարվա ընթացքում «Հայհեղինակ»-ը շարունակում էր կատարել իր ամենահիմնական և բարդ գործառույթը՝ լիցենզային պայմանագրերի կնքումը օգտագործող կազմակերպությունների հետ: Բոլոր այն օբյեկտները, որոնք ունեն լիցենզային պայմանագիր «Հայհեղինակ»-ի հետ /թատրոններ, հեռուստաընկերություններ, ռադիոընկերություններ, մալուխային օպերատորներ, համերգային պրոդյուսերներ, ռեստորաններ, սրճարաններ/ շարունակել են ինտենսիվ համագործակցել «Հայհեղինակ»-ի հետ: Տարվա ընթացքում օգտագործող կազմակերպությունների հիմնական մասը՝ ի տարբերություն նախորդ տարիներին, արդեն պատշաճ կերպով ներկայացնում էին օգտագործված ստեղծագործությունների ծրագրերը: «Հայհեղինակ»-ի աշխատակիցները անընդհատ վերահսկում էին օգտագործողների կողմից ներկայացված փաստաթղթերի իրականության հետ համապատասխանելիությունը, ճշմարտացիությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել ռադիո և հեռուստատեսության ընկերությունների կողմից ներկայացված ծրագրերի վրա: Շնորհիվ խիստ միջոցների՝ «Հայհեղինակ»-ը տարվա ընթացքում նոր պայմանագրեր է կնքել նոր օբյեկտների հետ:

Ինչպես նախկինում, այնպես էլ այս տարվա ընթացքում «Հայհեղինակ»-ի տեսուչները մեծ խնդիրներ են ունեցել ռեստորանների, դիսկոտեկների, համերգների պրոդյուսերների հետ, որոնք հրաժարվում էին համագործակցելուց: Բոլոր այն կազմակերպությունները, որոնք հրաժարվել են «Հայհեղինակ»-ի հետ համագործակցելուց, նրանց դեմ ներկայացվել են դատական հայցեր:

Works conducted with users

During the past year Armauthor was committed to the fulfillment of its main, but yet difficult function, which is the conclusion of license contracts with users. During the year all the organizations that had license agreements signed with Armauthor, e.g. theatres, radio and TV stations, cable TVs, concert organizers, restaurants, cafes, continued their close cooperation with Armauthor. Unlike previous years, this year the majority of users submitted the playlists in a proper way. The employees of Armauthor were constantly checking the compliance of documents submitted by users. Special attention was paid to the correctness of playlists submitted by TV and radio stations. Thanks to more rigorous measures and joint efforts new user organizations signed license contracts in the past year.

During the past year Armauthor's inspectors had serious problems with restaurants, disco clubs, production centers that refused to cooperate with Armauthor. Armauthor filed claims against those organizations that refused to cooperate.

Ավտոմատացված համակարգ

Ինչպես արդեն նշվել էր նախորդ հաշվետվություններում «Հայհեղինակ»-ը բաշխումները կատարում է COSIS էլեկտրոնային բաշխման ծրագիրի միջոցով:

Ստեղծվել և ներդրվել է հեղինակների և այլ իրավատերերի հաշվառման նոր կարգ: Հեղինակային բաժնի աշխատակիցները իրենց ամենօրյա աշխատանքում օգտվում են IPI և WID ծրագրերից: Նոր տեխնոլոգիաների շնորհիվ հեղինակները կարող են ստանալ լիարժեք տեղեկատվություն հոնորարի հավաքման, բաշխման և փոխանցման վերաբերյալ: Բացի այդ, «Հայհեղինակ»-ի բոլոր ֆինանսական հաշվետվությունները տարբեր ծառայությունների հետ (հարկային մարմիններ, պետական մարմիններ, վիճակագրական ծառայություններ և այլ կազմակերպություն) կատարվել են ավտոմատացված համակարգի միջոցով:

Automation of Armauthor's activities

As it has already been stated in previous reports, Armauthor is using the software COSIS for the distribution of collected royalties. A new system for the registration of authors and other right holders was implemented.
The employees of the copyright department used the programs IPI and WID in their daily work.
Thanks to the introduction of new technologies the authors can receive information on collection, distribution and payment of their royalties within short period of time. Besides the accounting reports to different services (tax authorities, State institutions, National statistics service, etc) were submitted electronically.

Միջազգային գործունեություն

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, «Հայհեղինակ»-ը 2001թ-ից հանդիսանում է CISAC միջազգային կազմակերպության անդամ: «Հայհեղինակ»-ը իր բոլոր գործառույթներն ու նպատակները իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և CISAC կազմակերպության պահանջներին համապատասխան: CISAC կազմակերպության կողմից կատարվող ցանկացած փոփոխություն գտնվում է «Հայհեղինակ» կազմակերպության ուշադրության կենտրոնում:
2022թ-ին բավականին լավ ամրապնդվել է մեր կապերը օտարերկրյա գործընկերների հետ: «Հահեղինակ»-ի աշխատակիցները ակտիվ մասնակցել են WIPO-ի և CISAC-ի կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին: Մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով, «Հայհեղինակ»-ի աշխատակիցները մասնակցել են նաև ՀՀ տարածքում անցկացված միջազգային կազմակերպությունների կողմից այլ կրթական և ինֆորմացիոն բնույթի միջոցառումներին: Տարվա ընթացքում տեղի են ունեցել արդյունավետ հանդիպումներ Գրողների միության, Կոմպոզիտորների միության և այլ միությունների ներկայացուցիչների հետ: Ողջ տարվա ընթացքում «Հայհեղինակ»-ը մշտական կապի մեջ է եղել պետական կառույցների հետ, մասնավորապես՝ ԿԳՄՍ նախարարության, Էկոնոմիկայի նախարարության՝ Մտավոր Սեփակա-նության գործակալության հետ: «Հայհեղինակ»-ն ավելի ամրապնդեց իր հարաբերությունները բոլոր հեղինակային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հետ: Մենք մեր խորին շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերներին՝ բեղմնավոր համագործակցության համար:

International activities

As it was mentioned, since 2011, Armauthor is member of international organization CISAC. Armauthor performs all its functions and objectives in accordance with the requirements of Armenian legislation and CISAC. Armauthor takes into consideration all amendments and changes made by CISAC.
In 2022 Armauthor strengthened the cooperation with foreign partners. The employees of Armauthor actively participated in all events organized by WIPO and CISAC. To improve the professional qualification, the employees of Armauthor participated in numerous learning and informative events organized by international organizations in Armenia. During the year we have had fruitful meetings with Writers union, Composers union and other union's representatives. During the year, Armauthor has been in contact with various governmental organizations, particularly with Ministry of Education, Ministry of Economy, Intellectual Property Agency.
Armauthor strengthened its contacts with all collective management organizations for author's rights. We express our gratitude to all our partners for their fruitful cooperation with Armauthor.

Ֆինանսական գործունեություն

Հեղինակների և այլ իրավատերերի համար տարվա ընթացքում հավաքված հեղինակային վարձատրությունները ամեն ամիս հարկերի և անդամավճարների պահելուց հետո ֆինասական բաժնի աշխատակիցների կողմից փոխանցվել են հեղինակների անձնական հաշիվների վրա: Անդամավճարները, որը կազմում է հավաքած ամբողջ գումարի 15%-ը, ծախսվել է կազմակերպության փաստացի ծախսերը հոգալու նպատակով. մասնավորապես՝ աշխատավարձ, գործուղման ծախսեր, կապի և կոմունալ ծառայությունների վճարներ, իրավաբանական ծախսեր, և այլ ծախսեր որոնք արվել են ի շահ հեղինակների:
2021թ-ի համեմատ ՀՀ տարածքից 2022թ-ի ընթացքում հավաքվել է մոտ 19 մլն.ՀՀ դրամ ավել գումար:

Financial activity

During the year the employees of Armauthor's financial department, after the deduction of administrative and membership fees, transferred the collected royalties to the authors and other right holders every month. The administrative fees which constitute 15% of collected royalties were used to cover the actual expenses of the organization, such as payment of salaries, business trips, utility expenses, membership payments to international organizations, bank service charges, legal services as well as payments made to authors.
In territory of Armenia, we have collected in 2022 around 19 mln. AMD more royalties than in 2021.

Հեղինակային վարձատրության հավաքման ցուցանիշները ՀՀ տարածքում ըստ օգտագործողների 2022թ.
Collections for 2022 by categories of users in Armenia

Օգտագործողներ Users	2021 հազ.դրամ (AMD, in thous)	2022 հազ.դրամ (AMD, in thous)
Թատրոններ Theatres	69.373	93.858
Ռադիոներ Radio	4.345	3.555
Հեռուստաընկերություններ TV	12.738	11.078
Կաբելային Cable	650	1.841
Համերգասրահներ Concert halls	4.257	3.365
Գիտական հոդվածներ Scientific articles	7.086	4.477
Այլ Other	1.765	651
ՀՀ-ից մուտքեր From Armenia	100.215	118.827
Քույր կազմակերպություններից From subsidiaries	19.510	21.884
Ընդամենը Total	119.725	140.711

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»-ի երկողմանի համաձայնագրերը օտարերկրյա կազմակերպությունների հետ

Reciprocal cooperation agreements with foreign organizations

1	ABRAMUS	(Brazil)	29.08.2007
2	ACDAM	(Cuba)	12.04.2008
3	ACUM	(Israel)	25.02.2015
4	AUTODIE	(Greece)	01.07.2022
5	AGADU	(Uruguay)	29.09.2004
6	AKKA/LAA	(Latvia)	30.05.2003
7	ALLERTON PRESS, INC	(USA)	17.02.2004
8	AMANAT	(Kazakhstan)	12.06.2012
9	ARTISJUS	(Hungary)	30.05.2002
10	AMUS	(Bosna and Hercegovina)	15.12.2015
11	ASCAP	(USA)	01.01.2003
12	BMI	(USA)	30.12.2003
13	EAU	(Estonia)	17.05.2002
14	GEMA	(Germany)	07.07.2011
15	GCA	(Georgia)	12.03.2001
16	GILDIYASI	(Uzbekistan)	22.02.2011
17	HFA	(USA)	01.01.2018
18	ITSRIGHT	(Italy)	14.02.2020
19	JASRAC	(Japan)	14.01.2013
20	KazAK	(Kazakhstan)	30.01.2003
21	KODA	(Denmark)	20.10.2016
22	KOUPIS	(Kazakhstan)	08.01.2018
23	LATGA-A	(Lithuania)	15.01.2010
24	LITA	(Slovakia)	14.03.2002
25	MESAM	(Turkey)	01.04.2009
26	MUSICAUTOR	(Bulgaria)	09.07.2002
27	NCIP	(Belarus)	24.01.2022
28	PAM CG	(Montenegro)	07.03.2017
29	PLENUM PUBLISHER (KAPP)	(USA)	12.09.2007
30	PRS	(United Kingdom)	12.04.2005
31	SABAM	(Belgium)	07.02.2019
32	SACD	(France)	25.07.2008
33	SADAIC	(Argentina)	04.08.2003
34	SACEM	(France)	23.08.2002
35	SAYCO	(Colombia)	01.02.2021
36	SAZAS	(Slovenia)	02.10.2003
37	SGAE	(Spain)	14.01.2004
38	SIAE	(Italy)	28.09.2009
39	SOCAN	(Canada)	29.07.2014
40	SODRAC	(Canada)	09.11.2011
41	SOUNDEXCHANGE	(USA)	05.09.2013
42	SPAUTORES	(Portugal)	13.11.2019
43	STEF	(Iceland)	15.03.2019
44	STIM	(Sweden)	01.05.2019
45	SUISA	(Switzerland)	23.06.2011
46	TEATRAL-AGENT	(Russian Federation)	16.07.2018
47	TEOSTO	(Finland)	10.09.2009
48	UACRR	(Ukraine)	05.05.2001
49	UCMR-ADA	(Romania)	29.10.2003
50	UKRAINIAN LEAGUE OF AUTHORS	(Ukraine)	01.04.2013
51	UPRAVIS	(Russian Federation)	16.07.2018

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»-ի հաշվարկները
արտասահմանյան գործընկերների հետ 2022թ. համար
Calculations of ARMAUTHOR with foreign partners for 2022

Արտասահմանյան գործընկերներ Society	Երկիր Country	Մուտքեր հազ.դրամ Received (AMD, in thous)	Վճարում հազ.դրամ Allocated (AMD, in thous)
ABRAMUS	(Brazil)		38325
ACUM	(Israel)	2.353,622	
AKKA/LAA	(Latvia)	41675	
ARTISJUS	(Hungary)	62687	16907
ASCAP	(USA)	222.766	471876
BMI	(USA)		276043
FACEBOOK	(Ireland)	3.248,720	
GEMA	(Germany)	1.358,076	162398
JASRAC	(Japan)	138827	
KODA	(Denmark)	195164	
MINT		3408570	
MUSICAUTOR	(Bulgaria)	294589	173381
NCIP	(Belarus)	609474	46585
OTHER	MUSE PRESS	2.346,736	6840175
PRS	(United Kingdom)	74870	135069
RAO	(Russian Federation)		4061587
RIGHT ALTERNATIVES			420340
S.I.A.E	(Italy)		191523
SABAM	(Belgium)	595328	
SACD	(France)		1.085,701
SACEM	(France)	5.912,191	456680
SAZAS	(Slovenia)	11029	
SESAC	(USA)		53184
SGAE	(Spain)	35519	33816
SPAUTORES	(Portugal)	309956	
SUISA	(Switzerland)	629302	290693
TEOSTO	(Finland)	35263	40480
	ESTONIA		48652
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ TOTAL		21.884,363	14.843,415

Վճարված հեղինակային վարձատրություն
2021 և 2022թ. հրապարակային կատարումների համար
Payments for authors՝ remuneration for 2021 and 2022

	2021 հազ.դրամ (AMD, in thous)	2022 հազ.դրամ (AMD, in thous)
Վճարված է հեղինակային վարձատրություն՝ Payments of remuneration	*65.468,4*	*90.050,0*
Արտասահմանյան այլ կազմակերպություններին Partners in other foreign countries	*3.495,3*	*15.579,692*
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ / TOTAL:	68.963,7	105.629,692

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ» ՀԿ 2022թ. ծախսեր

REPORT

Outcomes of ARMAUTHOR 2022

	2022 հազ.դրամ (AMD, in thous)
Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ Salary	*25.501,957*
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ *Travel expenses*	*90.0*
Կապի և կոմունալ ծառայությունների վճար, Գրասենյակային ապրանքների և նյութերի գնման ծախսեր Communication and Municipal expenses *Office stationery goods*	*919,071*
Տարածքի վարձակալության վճար Rent payment facilities	-
CISAC և IPI անդամակցության վճարման ծախս Membership subscriptions	*1.156,648*
Բանկային ծառայությունների ծախսեր Bank services	*309,204*
Ընդամենը ապարատի պահպանման ծախսեր Total central office expensess	***27.986,880***
Ի շահ հեղինակներին Authors gain	*2.955,158*
Ընդամենը . Total	***30.932,038***

ALL RIGHTS RESERVED COPYRIGHT ALL RIGHTS RESERVED

ՀԱՅՀԵՂԻՆԱԿ ՀԿ

Հայաստանի Հանրապետություն
0009 ք.Երևան, Կորյունի փ.19 ա
Հեռ. +374 10 526393,+374 10 529492
Էլ.փոստ: info@armauthor.am
Էլ.կայք: http://www.armauthor.am

ARMAUTHOR NGO

Republic of Armenia
0009 Yerevan, 19a Koryun str.
Tel +374 10 526393,+374 10 529492
e-mail: info@armauthor.am
Website: http://www.armauthor.am

Design by Susan Safaryan

2022